ձայն արձակել, դա նմանապէս շատ վատ և չարագուշակ նշան է և հաւատում են, որ մի անբախտ լուր պիտի լսեն մօտ օրերում։ Անձրևից յետոյ երկնքի վրայ երբոր կարմիր ու կանաչ ծիածան է երևում, ժողովուրդը հաւատում է, որ ամեն բերքերի մէջ մեծ առատութիւն պիտի լինի։ Ժողովրդի կարծիքով, կանաչ գոյնը՝ ցորենն ու հացահատիկներն են, իսկ կարմիրը՝ մեղրաքն ու գինին։ Կան այլ և այլ շատ հաւատալիքներ և նախապաշարմունքներ, որոնց վասին մի առ մի պիտի խօսեմ Ուտիացոց մասին գրելիք ընդարձակ մի այլ աշխատութեանս մէջ։

Լ

ԿՌԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԷՋ

Մինչև ցարդ Հայերն ու տեղական մահմեդականները երդւում են Աբևի անունով. իսկ առաջինները նրա պատուօտեան ծագման ժամանակ սկսում են մինչև անգամ երկիւղածութեամբ խաչակնքել իրենց երեսներին։ Նմանապէս երդւում են սովորական կրակի անունով և նրա մէջ կեղտոտ բան ձգելը կամ թքելը շատ ծանր մեղք ու անները չելի յանցանք են համարում՝ թէ հայերը և թէ Թուրքերը։ Ընդհանրապէս սրբավայրերում և մասնաւորապէս գերեզմանոցներում բուսած հինաւուրց ու հաստարմատ ծառերին վերաբերում